# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9 պայմանագրում 2020 թվականի փետրվարի 03-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 կետ: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
24.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9 պայմանագրի

ք. Երևան «03» ապրիլի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1919-Ն որոշումը և Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման իրականացման համար Կողմերի միջև 24.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<4.1.2 2020 թվականի համար Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 860 000 (մեկ միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա Կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:>>:

1.1.2 Պայմանագրի N 2 հավելվածը լրացնել նոր վճարման ժամանակացույցով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

**3Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011023778<br>ՀՎՀՀ 02565827 | <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ<br>ք. Երևան, Կոմիտաս 54բ<br><<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 220183330939000<br>ՀՎՀՀ 01508665 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն |
| _____ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | _____ Գ. Արշակյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված
24.10.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9 գնման պայմանագրի
«03» ապրիլի 2020թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

## Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540-1 | Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ | - | - | - | - | - | - | 1 711 000 | 1 711 000 | 1 711 000 | 1 815 000 | 1 815 000 | 1 860 000 | 1 860 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<ՀՀ նախագծերի պետական
արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտաս 54բ
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220183330939000
ՀՎՀՀ 01508665

Տնօրեն՝

_______________ Գ. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.